ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

*գ. Հովտաշեն Շիրազի 10/2*
*Փ. 0725*
*/098/ 43-51-07*
*hovtashen.ararat@mta.gov.am*

*«15» «02» 2019թ.*

# *ՈՐՈՇՈՒՄ*

15.02.2019 թվականի թիվ 6

## ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով.

Ավագանին որոշեց՝

Հաստատել Հովտաշեն համայնքի ավագանու 15.02.2019 թվականի թիվ 03 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը՝

1. Հովտաշեն համայնքի ավագանու 15.02.2019 թվականի թիվ 03 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին հարցը /Զեկ. Ս.Մկրտչյան/
2. Համայնքի ավագանու 20.12.2018 թվականի թիվ 37-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին հարցը /Զեկ. Ս.Մկրտչյան/
3. Համայնքը սպասարկող անասնաբուժական ծառայությունների մատուցման մասին հարցը /Զեկ. Ս.Մկրտչյան/

Քվեարկություն

| | Կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա. Հ. Հարությունյան | [signature] | | |
| Գ. Դ.Ներսիսյան | [signature] | | |
| Ռ. Հ. Մկրտչյան | [signature] | | |
| Ռ.Օ.Մկրտչյան | [signature] | | |

Համայնքի ղեկավար [signature] Ս. Մկրտչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*գ. Հովտաշեն Շիրազի 10/2*
*Փ. 0725*
*/098/ 43-51-07*
*hovtashen.ararat@mta.gov.am*

*«15» «02» 2019թ.*

# *ՈՐՈՇՈՒՄ*

15.02.2019 թվականի թիվ 7-Ն

## ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20.12.2018 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 37-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի և 14-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի պահանջներով.

Ավագանին որոշեց՝

Հովտաշեն համայնքի ավագանու 20.12.2018 թվականի «Հովտաշեն համայնքի 2019 թվականի «Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 37-Ն որոշման մեջ 4-րդ կետով ավելացնել անասնաբուժական ծառայությունների վճարների ցանկը

| | |
|---|---|
| 1.Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն<br>Ծննդօգնություն | 500 դրամ |
| 2.1.թեթև միջամտություն<br>2.ծանր միջամտություն | 1000դրամ<br>5000 դրամ |
| 3.Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների խնամք կանխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից (բացառությամբ՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների) | Մանր կենդանի 100 դրա<br>Խոշոր կենդանի 200 դրա |
| 4.Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար | 200 դրամ |
| 5.Ախտահանություն | 1քառ. մետր 200 դրամ |
| 6.Միջատազերծում (դեզինսեկցիա) | 1քառ. մետր 100 դրամ |
| 7.Կրծողների ոչնչացում (դեռատիզացիա) | 1քառ. մետր 200 դրամ |

| | |
|---|---|
| 8.Արհեստական սերմնավորում | 5000 դրամ |
| 9.Կենդանու հերձում | Մանր կենդանի 1000 դրամ Խոշոր կենդանի 3000 դրամ |
| 10. Կենդանու բուժում՝ կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից | Յուրաքանչյուր այցելությունը 1000 դրամ |
| 11.Կենդանիների նախասպանդային զննում՝ կախված կենդանու տեսակից | Մանր կենդանի 1000 դրամ խոշոր կենդանի 2000 դրամ |
| 12.Կենդանիների հետսպանդային զննում | մանր կենդանի 1000 դրամ Խոշոր կենդանի2000 դրամ |

| Քվեարկության | Կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա. Հ. Հարությունյան | [signature] | | |
| Գ. Դ.Ներսիսյան | [signature] | | |
| Ռ. Հ. Մկրտչյան | [signature] | | |
| Ռ.Օ.Մկրտչյան | [signature] | | |

Համայնքի ղեկավար՝ Ս.Մկրտչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*գ. Հովտաշեն Շիրազի 10/2*
*Փ. 0725*
*/098/ 43-51-07*
*hovtashen.ararat@mta.gov.am*

*«15» «02» 2019թ.*

# *ՈՐՈՇՈՒՄ*

15.02.2019 թվականի թիվ 8

## ՀԱՄԱՅՆՔԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով.

Ավագանին որոշեց՝

Առաջարկել համայնքի ղեկավարին՝ անասնաբուժական ծառայությունների մատուցման համար, կնքել անասնաբուժական գործունեության իրականացման պայմանագիր, համայնքը սպասարկող անասնաբույժի հետ, ամսական 30000 (երեսուն հազար) դրամի չափով:

Քվեարկության

| | Կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա.. Հ. Հարությունյան | | | |
| Գ. Դ.Ներսիսյան | | | |
| Ռ. Հ. Մկրտչյան | | | |
| Ռ.Օ.Մկրտչյան | | | |

Համայնքի ղեկավար Ս.Մկրտչյան